ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2015 թվականի N 1141 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակման ժամանակ հիմք են ընդունում նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրում համապատասխան պետական կառավարման մարմնի համար սահմանված տվյալ տարվա միջոցառումները:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինների հետ համատեղ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պլանավորման ժամանակ

քննարկել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրով տվյալ տարվա համար նախանշված արդյունքների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու հնարավորությունը:

4. Հանձնարարել հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին և առաջարկել օրենքով ստեղծված մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի հանձնաժողովին ներկայացնել տարեկան հաշվետվություն սույն որոշմամբ հաստատված ծրագրում ներառված միջոցառումների ընթացքի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հոկտեմբերի 9
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1141 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....4

Ներածություն.....5

Գլուխ 1. Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում.....6

1.1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2009-2012 թթ. ծրագրի արդյունքները.....6

1.2. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները.....11

1.3.ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նպատակները, հիմնական ուղղությունները և խնդիրները.....12

1.4. Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար արժեքներն ու սկզբունքները.13

1.5. ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինները.....15

Գլուխ 2. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցները.....20

2.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցները.....20

2.1.1. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը.....20

2.1.2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորումը.....22

2.1.3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորումը.....24

2.1.4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը.....25

2.2.Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը և արդյունավետ քննությունը.....26

2.3. Հանրային վստահության բարձրացումը.....28

Գլուխ 3. Հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտները.....30
3.1. Հակակոռուպցիոն ռազմավարությունը կրթության ոլորտում.....30
3.2. Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում.....33

3.3. Հակակոռուպցիոն ռազմավարությունը ոստիկանության ոլորտում՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով.....34

3.4. Հակակոռուպցիոն ռազմավարությունը առողջապահության ոլորտում.....36

3.5. Ոլորտների ռիսկային վերլուծությունը, հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի վերանայումը.....37

Գլուխ 4. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ցուցանիշների համակարգը....38

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ Ազգային ժողով
բուհ բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԽ Եվրոպայի խորհուրդ (CoE)
ԵՄ Եվրոպայի միություն
ԵՀՔ Եվրոպական հարևանության քաղաքականություն (ENP)
ԶԼՄ զանգվածային լրատվության միջոցներ
ԷԱԳ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի եվրասիական խումբ (EAG)
ԹԻ Թրանսպարենսի ինթերնեշնլ (TI)
ԿԳՆ Կրթության և գիտության նախարարություն
ԿԴՊՊԽ Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO)
ԿԸՀ Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿՀՀ Կոռուպցիայի հսկելիության համաթիվ
ԿՊԽ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ
ՀԲ Համաշխարհային բանկ (WB)
ՀԲԻ Համաշխարհային բանկի ինստիտուտ
ՀԿ Հասարակական կազմակերպություն
ՀՀ Հայաստանի Հանրապետություն
ՀՌԻՄԾ Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր
ՀՀ ՖՆ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԿԴԿ Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (UNCAC)
ՀՌԻՄՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով
ՏԶԿ/ԹԻ Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսպարենսի ինթերնեշնլ
ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)
ՔԾԽ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
ՔՕ Քրեական օրենսգիրք

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Վերջին տասնհինգ տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել և հռչակել է իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը:

2. Դեռևս նախորդ տասնամյակի սկզբներին ՀՀ կառավարությունն ամբողջականացրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները: Մասնավորապես, 2003 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության N 1522-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007 թթ. ծրագիրը, որը սահմանում էր կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: Նշված ռազմավարությունը միտված էր կոռուպցիայի հաղթահարմանը, այն ծնող և դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, երկրում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը:

3. ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական իրականացման կարևորագույն նախադրյալներից էր ինստիտուցիոնալ կառույցի ձևավորումը: 2004 թ. հունիսի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվել է ԿՊԽ-ն, որն ի պաշտոնե գլխավորում էր ՀՀ վարչապետը: Խորհրդին առընթեր ստեղծվել էր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով՝ ՀՀ Նախագահի օգնականի ղեկավարությամբ:

4. 2009 թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության N 1272-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը, որով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանվել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը:

5. ՀՀ ԱԺ-ի 2014 թվականի մայիսի 22-ի «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-115-Ն որոշմամբ ևս մեկ անգամ ՀՀ կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը սահմանվեց կոռուպցիայի դեմ պայքարը: Մասնավորապես, սահմանվեց, որ ՀՀ կառավարությունը հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնելու է կոռուպցիայի դեմ պայքարի նոր վերաիմաստավորված տեսլականի հիման վրա: Այդ տեսլականը նախևառաջ միտված է հանրային կառավարման համակարգում բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյայի տեսակի ձևավորման միջոցով կոռուպցիայի մակարդակի ու տարածվածության նվազեցմանը, հանրային վստահության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման ավելի արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2009-2012 թթ. ծրագրի արդյունքները

6. ՀՀ-ում հակակոռուպցիոն նոր քաղաքականության առաջնայնություններն ու խնդիրները նախանշելու, ՀՀ հակակոռուպցիոն մարմինների նոր ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու նպատակահարմարությունը որոշելու, հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում կառավարության ապագա քայլերը որոշելու նպատակներով կարևորվում է ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը:

7. ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրակա-նացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրն ուղղված էր կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատարելագործմանը՝ կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությունը և հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի դերը:

8. ՀՀ կառավարությունը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն են՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի տնտեսական մրցակցության բարձրացումը: Նշված նպատակի և հիմնական արդյունքների կենսագործման համար փաստաթղթում նախատեսվել են շուրջ 124 ռազմավարական դրույթներ, որոնք բաժանվում են միջոցառումների՝ առանձնացված 2009, 2010, 2011 և 2012 թվականների իրականացման համար:

9. 2000 թվականից ի վեր՝ ՀՀ կառավարության գործունեության, ինչպես նաև տարեկան գործունեության միջոցառումների ծրագրերում շարունակաբար ամրագրվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղենիշները:

10. Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի ուշագրավ արդյունքներն են՝

1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով ապահովվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը ՀՀ ֆինանսական դիտարկումների և ֆինանսական հաստատությունների համար: Բարձրացել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի բացահայտման արդյունավետությունը.

2) հարկային ոլորտում հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել են հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վերհանելու և տնտեսական հանցագործությունների ու կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր: Ընդլայնվել է էլեկտրոնային հարկային ծառայությունների շրջանակը: Ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային եղանակով ընդունելու պահանջը: Ներդրվել է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումներն առաքելու ավտոմատացված համակարգը: Գործարկվել է ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության ավտոմատացված համակարգը: Ներդրվել և ամբողջությամբ գործում են հարկային ծառայության գործունեության ու պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը, հարկ վճարողների սպասարկման կենտրոնները և հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնը.

3) մաքսային ոլորտում բարձրացել է մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը: Ներդրվել են մաքսային ծառայության կատարողականի գնահատման համակարգը, դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգերն ու մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգը: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մաքսային ծառայության պաշտոնական կայքի և թեժ գծի հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև արդյունավետ հաղորդակցություն.

4) կրթության ոլորտում ներդրվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների միասնական համակարգը, հեշտացվել է դպրոցից բարձրագույն ուսումնական հաստատությունների անցման գործընթացը: Կառավարման թափանցիկության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում բարձրագույն ուսումնական

հաստատությունների կողմից մշակվել են իրենց տարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի համաձայն: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշները: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկության ու անկախության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ.

5) առողջապահության ոլորտում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայվել և փոփոխվել է հիվանդանոցային ծառայությունների փաթեթը, ինչն արտացոլված է «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում.

6) դատական համակարգում, դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկության և վերահսկելիության ապահովման ուղղությամբ 2012 թ. ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է դատավորների շահերի բախման ինստիտուտը.

7) իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում ներդրվել է էլեկտրոնային ռեգիստրի գաղափարը՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում կատարելով փոփոխություններ: Օրենքի ընդունումից հետո պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը ստացվում են միայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով: Կրճատվել են իրավաբանական անձանց պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման և լուծարման գրանցման ժամկետները.

8) դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունների բարձրացման ուղղությամբ ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգը: Բարելավվել են դատական ակտերի հարկադիր կատարման նկատմամբ ՀՀ արդարադատության նախարարության շրջանակում իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Վերանայվել են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդներն ու ընթացակարգերը: Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ապահովման ընթացակարգը:

9) ոստիկանության ոլորտում նշանակալի արդյունքներ են արձանագրվել. ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչային ծրագիրը: Կատարելագործվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: Կանոնակարգվել է բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս: Բնակչության պետական ռեգիստրի բազայում ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշների համակարգը: Կատարելագործվել է ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը: Պարզեցվել է վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու ընթացակարգը: Ներդրվել է սեփականատիրոջ դիմումի հիման վրա բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին կարճ ժամանակում հաշվառումից հանելու պարզեցված ընթացակարգը.

10) հանրային ծառայության ոլորտում 2012 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգում է հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Կանոնակարգվել է ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկան, շահերի հայտարարագրման մեխանիզմներն ու շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը: Ձևավորվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովը և գործարկվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգը.

11) կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունեն նաև ծրագրի գործողության ընթացքում ընդունված հակակոռուպցիոն իրավական ակտերն, ինչպիսիք են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 22.12.2010 թ., «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.05.2011 թ., ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ ընդունված 26.05.2011 թ. (ընտրարշավների ֆինանսավորման մեջ կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների մասով):

11. Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար ՀՀ-ում ներդրվել է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ, որում քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման ու հետապնդման մասնագիտացված մարմինների կողմից իրականացվող գործառույթներից:

12. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրում նախանշված նպատակներն ամբողջությամբ չեն իրագործվել, և ՀՀ շարունակում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքը: Հասարակության մեջ կոռուպցիայի մակարդակի ամենացածր

ընկալումը տեղական ինքնակառավարման մարմիններում է և դպրոցներում: Կոռուպցիայի ամենաբարձր մակարդակն ընկալվում է ոստիկանությունում, դատաիրավական համակարգում, հարկային և մաքսային մարմիններում, պետավտոտեսչությունում և բուհերում:

13. Ուշագրավ է նշել, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգը խարսխված է միջազգայնորեն ընդունված կոռուպցիայի գնահատման ցուցանիշների համակարգի և դրանց մեթոդաբանության վրա:

14. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրն ամրագրել էր գերատեսչական (ոլորտային) հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման քաղաքականություն, որը, սակայն, ամբողջությամբ չի ապահովվել պետական մարմինների կողմից: Միայն առանձին դեպքերում են ընդունվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ոլորտային ծրագրեր կամ այլ փաստաթղթեր, մասնավորապես, Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը, Առողջապահության համակարգի բարեփոխման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակացույց՝ 2010-2012 թթ. համար: Ծրագրով նախատեսված մի շարք հակակոռուպցիոն օրենքների ընդունումը չի ապահովվել: Օրինակ՝ «Ծրագրային բյուջետավորման մասին» և «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքները չեն ընդունվել:

15. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների լրիվ կամ մասնակի չկատարման պատճառները պայմանավորված են ՀՀ հակակառուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի թերի պլանավորմամբ՝ միջոցառումների, արդյունքի իրականացման պատասխանատու մարմնի ոչ ճիշտ որոշման, միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքի իրականացման ոչ հիմնավոր վերջնաժամկետներ սահմանելու պատճառով: Միջոցառումներն անհրաժեշտ չափով համալիր և ամբողջական չէին: Այդ ծրագիրը մշակելիս կոռուպցիոն հիմնախնդիրները, կոռուպցիայի պատճառները, դրսևորման ձևերը թերի էին բացահայտվել:

16. 2009-2012 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության խնդիրներից մեկը նաև անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցների լիարժեք ապահովվածության բացակայության պարագայում ներառված ոլորտների չափազանց լայն և ոչ թիրախավորված լինելն էր:

17. Հակակոռուպցիոն ռազմավարություն մշակելիս հիմնախնդիր է կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերումն ու դրանց հաղթահարման ուղիների

փնտրտուքը, մինչդեռ ռիսկերը պետք է գնահատված լինեին նախքան միջոցառումների ծրագրի մշակումը, ինչը չէր արվել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը մշակելիս: Ծրագրի կենսագործման ընթացքում չի ապահովվել նոր կոռուպցիոն ռիսկերի և պատճառների ուսումնասիրության հիման վրա ծրագրում նախանշված միջոցառումների փոփոխումը կամ համալրումը: Ծրագրով կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար մի շարք ոլորտներում նախատեսվել էին հիմնականում օրենսդրական փոփոխություններ և (կամ) վերապատրաստումներ ենթադրող միջոցառումներ, որոնք չէին կարող էական ազդեցություն ունենալ կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վրա:

1.2. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

18. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվել են:

19. 2004 թ. հունվարին Հայաստանն անդամակցել է ԿԴՊՊԽ-ին, իսկ 2004 թ. հունիսին և դեկտեմբերին, ստորագրել և վավերացրել է Եվրախորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով:

20. ԵՀՔ-ի շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006 թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները միաժամանակ ներառված են նաև ՄԱԿ-ի, ԵԽ-ի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական

իրավունքի մասին» կոնվենցիաներում, ԿԴՊՊԽ-ի ու ՏՀԶԿ-ի առաջարկություններում:

21. 2005 թ. ՀՀ-ը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, որը 2006 թ. վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից: Լինելով ՄԱԿԿԴԿ-ի անդամ՝ ՀՀ-ը ենթարկվել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման մոնիթորինգին:

22. 2005 թ. ստորագրված ՆԱՏՕ-ի հետ ՀՀ անհատական գործընկերության գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը պարտավորվել է ակտիվորեն մասնակցել ԿԴՊՊԽ-ի գործունեությանն ու իրականացնել ԿԴՊՊԽ-ի առաջարկությունները, իրականացնել ՀՌԻՄԾ-ն, ներդնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի կանխարգելման և հետապնդման հստակ և թափանցիկ հաշվետվողականության մեխանիզմ, պետական պաշտոնյաների ուսուցման և վերապատրաստման միջոցով բարելավել իրազեկումը կոռուպցիայի վերաբերյալ:

23. 2012 թ. ապրիլի 17-ին Հայաստանը միացել է Բաց կառավարման համագործակցությանը: Բաց կառավարման համագործակցությունը ստեղծվել է 2011 թվականի սեպտեմբերի 20-ին 8 հիմնադիր երկրների (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) կողմից՝ թափանցիկ, հաշվետու և արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով: Հայաստանը, միանալով այս նախաձեռնությանը, ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց շարքում է նաև կոռուպցիայի դեմ պայքարը:

1.3. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նպատակները, հիմնական ուղղությունները և խնդիրները

24. Հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելն է, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը:

25. Ռազմավարությունն օգնելու է պետական կառավարման կառույցներին փոխել իրենց ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մշակույթն ու հետևանքների առումով որդեգրել արդյունքին ուղղված մոտեցում: Ռազմավարությունը պահանջում է ակտիվ մասնակցություն բոլոր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության կողմից:

26. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյաների միջոցով կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական խնդիրը հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը, կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանմանը, կոռուպցիոն վարքագծի դրսևորումների արդյունավետ քննությանը և հանրային վստահության բարձրացմանն ուղղված միջոցների համալիր կիրառումն է: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը տվյալ խնդիրն իրականացնելու է թիրախային չորս ոլորտում՝ առողջապահության, կրթության, պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման:

1.4. Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար արժեքներն ու սկզբունքները

27. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման նոր տեսլականը հիմնված է «փոփոխության տեսության» վրա: Այն ենթադրում է կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացի վերաիմաստավորում, դրա հիմքում ընկած սկզբունքների, արժեքների, չափանիշների վերանայում և վերափոխում:

28. Հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնարար արժեքները կենսագործելու նախապայմանի վրա՝

1) **մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, օրենքի գերակայություն.** բոլոր պետական մարմինները պետք է հետևեն օրենքների պահանջներին: Այն քաղաքացիները, որոնց իրավունքները խախտվել են, արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորություն պետք է ունենան.

2) **քաղաքական կամք**. պետական իշխանության բոլոր ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, լիովին գիտակցում են կոռուպցիայից զերծ հասարակություն ունենալու կարևորությունը և արդյունավետ համագործակցում են՝ ռազմավարության իրականացումն ապահովելու համար.

3) **հանրային շահի առաջնայնություն**. իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից: Անթույլատրելի է լիազորությունների օգտագործումն իրենց, իրենց ընտանիքների կամ մտերիմ-

ների համար չարդարացված նյութական կամ ոչ նյութական օգուտներ կամ առավելություններ ստանալու համար.

4) **բարեխղճություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչները պարտավոր են հրապարակել իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձնական շահ, ինչպես նաև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար.

5) **թափանցիկություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը.

29. Հանրային կառավարման ժամանակակից և արդյունավետ համակարգի ձևավորման համար ռազմավարության իրականացումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) **իրավունքի գերակայություն**. բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, ապահովված է իշխանությունների լիարժեք բաժանումը, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումը.

2) **պատասխանատվություն.** հանրային իշխանության մարմինները պատասխանատու են ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար.

3) **կոռուպցիոն ռիսկերի գնահատում և կառավարում.** հանրային յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունակ լինի իր կողմից իրականացվող կառավարման գործընթացում կանխատեսելու կոռուպցիոն պոտենցիալ ռիսկերը և համարժեքորեն նվազեցնելու դրանք.

4) **ինքնագնահատում.** պետական կառավարման պատասխանատու մարմինների կողմից կոռուպցիոն ռիսկերը պետք է պարբերաբար գնահատվեն՝ այս ռազմավարության և դրա համապատասխան գործողությունների ծրագրի իրականացման նպատակով.

5) **հակակոռուպցիոն ընթացակարգերի մշակման և իրացման համաչափություն.** հանրային ինստիտուտները պետք է մշակեն, ներդնեն և իրականացնեն այնպիսի հուսալի ընթացակարգեր, որոնք համաչափ կլինեն ինստիտուցիոնալ ռիսկերին և տվյալ ինստիտուտի պաշտպանվածության աստիճանին (խոցելիությանը), ինչպես նաև կհամապատասխանեն այս կամ այն ինստիտուտի ռեսուրսներին և կազմակերպական առանձնահատկություններին.

6) **քաղաքական բարձրագույն մակարդակում հաշվետվողականություն.** հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը պահանջում

է կառավարման բարձրագույն մակարդակում հանրային բոլոր ինստիտուտներին կոռուպցիայի բացարձակ անհանդուրժողականության հստակ ազդակների հասցեագրում:

Կառավարման յուրաքանչյուր օղակ պետք է նախաձեռնի, ղեկավարի և վերահսկի կոռուպցիայի հակազդման միջոցառումներ՝ գիտակցելով, որ կոռուպցիան հակասում է բարեխղճության և թափանցիկության հիմնարար արժեքներին.

7) **կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում.** առաջնահերթ և պարտադիր է ապահովել կոռուպցիոն իրավախախտումներ ծնող և դրանց նպաստող նախադրյալների վաղ բացահայտումը և ժամանակին չեզոքացումը: Հանրային ինստիտուտները պետք է միջոցներ ձեռնարկեն կոռուպցիայի դեմ պայքարում վստահելի գործընկերներ գտնելու և նրանց հետ համագործակցելու գործում: Գործընկերային կամ այլ համաձայնություններ կնքելիս՝ յուրաքանչյուր ինստիտուտ պետք է հավաստիանա, որ հակառակ կողմն ունի սույն և մյուս սկզբունքներին համապատասխանող քաղաքականություն և ընթացակարգեր.

8) **համագործակցություն և համաձայնեցում.** կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում ներգրավված ինստիտուտները պետք է սերտորեն համագործակցեն՝ ապահովելով նպատակների և դրանց նվաճման միջոցառումների միասնական սահմանումը և համատեղ իրականացումը.

9) **հանրային-մասնավոր գործընկերություն.** անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի դեմ ձեռնարկվող կանխարգելիչ կոնկրետ միջոցների իրականացման գործում քաղաքացիական հասարակության և գործարար հանրության ներգրավվածությունը:

1.5. ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինները

30. Հայաստանում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված կառավարման համակարգ, որտեղ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման մասնագիտացված մարմիններից:

31. ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականությունը կենսագործվում է կանխարգելիչ ինստիտուցիոնալ մոդելի շրջանակներում՝ ստորև նշված կառուցվածքով:

32. Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ): Խորհուրդը ղեկավարում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկվում են ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, ՀՀ ֆինանսների նախարարը, ՀՀ արդա-

ռադատության նախարարը, ՀՀ գլխավոր դատախազը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահը, խորհրդարանական ընդդիմադիր խմբակցություններից մեկական ներկայացուցիչ, Հանրային խորհրդի նախագահը, համայնքների միության մեկ և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ:

33. Խորհուրդը՝

1) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարությանը.

2) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

3) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերին.

4) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

5) համակարգում է հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների իրականացումը, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը՝ պետական մարմիններից պահանջելով և ստանալով անհրաժեշտ նյութեր ու տեղեկատվություն, կազմակերպելով և անցկացնելով հանդիպումներ, քննարկումներ, լսումներ, քննարկելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա խնդիրները և առաջարկելով դրանց լուծման հնարավոր տարբերակներ.

6) իրականացնում է հսկողություն հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների կատարման, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի նկատմամբ՝ առաջարկություններ ներկայացնելով պատասխանատու մարմիններ, պահանջելով հաշվետվություններ և վերլուծություններ, կազմակերպելով ու անցկացնելով քննարկումներ, հանդիպումներ, լսումներ.

7) քննարկում է հակակոռուպցիոն ծրագրերի գնահատման (մոնիթորինգի) արդյունքները և հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա առաջարկություններ ներկայացնում պատասխանատու մարմիններ.

8) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում համագործակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ, այդ թվում՝ համակարգված

հանդիպումների միջոցով: Ընդ որում, համակարգված հանդիպումների ժամանակ տեղի են ունենում քննարկումներ իրականացված միջոցառումների, խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև պատշաճ հաղորդակցություն և արդյունավետ համագործակցություն: Քննարկումների արդյունքում ներկայացված կարծիքները խորհուրդը կարող է ներառել իր նախապատրաստած առաջարկությունների մեջ.

9) հաստատում է խորհրդի աշխատակարգը.

10) հաստատում է հանձնախմբի աշխատակարգը.

11) սահմանում է փորձագետների ընտրության կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող չափանիշները:

34. Խորհրդի՝ հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա պատասխանատու մարմիններին ներկայացրած առաջարկությունները կենսագործվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ պատասխանատու մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերով: Խորհրդի առաջարկությունները կարող են հիմք ծառայել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի համար:

35. Խորհրդին կից ստեղծվում է անկախ փորձագետներից կազմված՝ մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ:

36. Հանձնախումբը՝

1) աջակցում է հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի նախագծերի մշակմանը, խորհուրդ է ներկայացնում առաջարկություններ ռազմավարությունում և (կամ) հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

2) իրականացնում է ծրագրերի մոնիթորինգ, գնահատում, ամփոփում է ծրագրերի իրականացման մասին հաշվետվությունները.

3) նախապատրաստում է հաշվետվություններ, զեկույցներ ծրագրերի կատարման վիճակի մասին և առաջարկություններ ներկայացնում խորհուրդ.

4) խորհրդի կողմից նախանշված, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ոլորտներում ուսումնասիրում, վերլուծում է կոռուպցիայի դրսևորումներն ու պատճառները և ներկայացնում դրանց առավել արդյունավետ լուծման վերաբերյալ առաջարկություններ.

5) խորհրդի հանձնարարությամբ իրականացնում են միջոցառումներ՝ կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնմանն ու տարածմանը նպաստելու համար՝ մասնակցելով տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստման աշխատանքներին,

հանդես գալով զանգվածային լրատվության միջոցներով, իրականացնելով այլ գործառույթներ: Այս գործառույթն իրականացնելիս՝ հանձնախումբը համագործակցում է պետական մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հետ.

6) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում ապահովում է խորհրդի համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, տեղական գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ.

7) խորհրդի հանձնարարությամբ՝ մշակում է ուղեցույցներ և ներկայացնում խորհրդի հավանությանը, պատասխանատու մարմիններին ցուցաբերում է մեթոդական և այլ աջակցություն.

8) կատարում է խորհրդի կողմից տրված այլ հանձնարարություններ:

37. Խորհրդի և փորձագիտական հանձնախմբի կազմակերպատեխնիկական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը (այսուհետ՝ մոնիթորինգի բաժին) իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է խորհրդի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.

2) կազմակերպում է փորձագիտական հանձնախմբի աշխատանքները և ապահովում փորձագետների կապը ոլորտային պետական լիազոր մարմինների պատասխանատուների հետ.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազ-մավարության ու դրա իրականացման միջոցառումների, ծրագրի, հաշվետվու-թյունների և միջազգային պայմանագրերով կոռուպցիայի դեմ պայքարում ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցների մոնիթորինգ.

4) իրականացնում է հսկողություն իր գործունեության ոլորտներին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ և դրա մասին տեղեկատվություն ներկայացնում խորհուրդ.

5) իրականացնում է հակակոռուպցիոն ռազմավարությամբ, հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերով և այլ իրավական ակտերով հաստատված (սահմանված) հակակոռուպցիոն ծրագրերին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կառա-վարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանը կամ կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև

առանձին հարցերի հետ կապված մասնագիտական փորձաքննություն, տալիս է համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ.

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տեղական ու միջազգային ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպում և իրականացնում է միջոցառումներ, այդ թվում՝ քննարկումներ, կլոր սեղաններ, տեղեկատվական նյութերի և ուղեցույցների տարածում, որոնք կնպաստեն հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում:

38. Առանձին ոլորտներում հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնում են պատասխանատու մարմինները (նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմիններ): Պատասխանատու մարմիններն ապահովում են ոլորտային ծրագրերի մշակումն ու լիարժեք իրականացումը: Տվյալ մարմիններում նշանակվում են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում): Պատասխանատուների պաշտոնների անձնագրերում (աշխատանքի նկարագիր) պետք է ներառվեն հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ: Յուրաքանչյուր պատասխանատու մարմնում պետք է նշանակվի նաև հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ՝ առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով:

39. ՀՀ-ում գործում են բազմաթիվ պետական մարմիններ, որոնք, իրենց գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս, նպաստում են կոռուպցիայի կանխարգելմանը: Այդպիսի մարմիններ են բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովը, ՀՀ վերահսկիչ պալատը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, ՔԾԽ-ն, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը և այլն: Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում առանցքային դեր ունեն բազմաթիվ պետական մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմինները:

40. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունն իրականացնում են ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության պետական ծառայությունը: Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և

հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դատարանում մեղադրանքի պաշտպանությունն իրականացնում է ՀՀ դատախազությունը:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցները

2.1.1. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը

41. Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևորվում է օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը: Այս առումով, առաջնային նախապայման է **հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց օրինավոր և բարեխիղճ վարքագիծն ապահովող ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը**: Վերջինիս իրականացման միջոցառումներն ընդգրկում են՝

1) ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում՝ ճյուղային օրենքներով էթիկայի սկզբունքների և վարքագծի կանոնների սահմանումը.

2) հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներ (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) ձևավորելը, դրանց ձևավորման և գործունեության նորմերի սահմանումը, պատշաճ գործունության ապահովումը, ինչպես նաև վերջիններիս համար իրենց գործունեության վերաբերյալ համակարգող մարմնին և հանրությանը հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պարտականության սահմանումը.

3) հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) գործունեության համակարգման մարմին նշանակելը: Տվյալ մարմինը վերջիններիս կտրամադրի մեթոդական ուղեցույցներ և կապահովի դրանց վերապատրաստման, մոնիթորինգի և գնահատման արդյունավետությունը.

4) յուրաքանչյուր պետական մարմնում հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ), անձնակազմի

կառավարման ստորաբաժանումների և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման համար պատասխանատուների միջև համագործակցության գործուն մեխանիզմներ ներդնելը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքներ տրամադրելը և ռեսուրսներով համալրելը.

6) վարքագծի կանոնների պահանջների իրական կատարումը՝ ներառյալ այդ պահանջներին չենթարկվելու համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը.

7) էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման գործառույթների վերապահումը.

8) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության գործընթացի վերանայման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ռեսուրսներով համալրելը.

9) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային ծառայողի ու պաշտոնատար անձի անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների շրջանակի վերանայումը, դրանց հստակության և կանխատեսելիության ապահովումը:

42. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման կարևոր նախապայմաններից մեկը **շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգերի ձևավորումն է:** Սա իրագործելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) հանրային ծառայողի և պաշտոնատար անձի շահերի բախման հասկացության և իրավիճակների սահմանումը, շահերի հայտարարագրման մեխանիզմների սահմանումն ու կատարելագործումը, այդ թվում՝ բարձր ռիսկային ոլորտներում, ինչպես նաև՝ այն պետական պաշտոնյաների համար, ովքեր չունեն վերադաս.

2) հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման, ինչպես նաև դրանց չեզոքացման գործառույթների վերապահումն էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին.

3) շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև սահմանված պահանջների

խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը:

43. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման հաջորդ կարևոր նախադրյալը **հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավումն է:** Վերջինիս իրականացման միջոցառումներն ընդգրկում են՝

1) ակտիվների ու շահերի հայտարարագրման գործընթացի վերանայումն ու օպտիմալացումն՝ ընդլայնելով հայտարարագրման ենթակա տվյալների ցանկը և հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը, որոշակիացնելով փոխկապակցված անձանց և ընտանիքի կազմին վերաբերող տվյալների շրջանակը, հստակեցնելով հայտարարագրման կարգը և ժամկետները.

2) հայտարարագրման գործընթացի կանոնների կատարման մշակումն ու ներդնումը՝ ներառյալ այդ կանոնների պահանջները չկատարելու համար իրավական ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերը.

3) հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացումը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

2.1.2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորումը

44. Հանրային ծառայության միասնականությունն ու ամբողջականությունը, պետական մարմինների գործառույթների հստակ տարանջատումը, կառուցվածքային և գործառութային արդյունավետության ապահովումը կոռուպցիայի կանխարգելման պայմաններն են: Այս առումով, **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է լինելու հանրային կառավարման մարմինների կառուցվածքային և գործառնական բարեփոխումների ապահովմանը:** Սրա իրականացման միջոցառումներն ընդգրկում են՝

1) վարչարարության պարզեցման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը.

2) հանրային կառավարման մարմինների կառուցվածքային արդյունավետության գնահատումը, գործող ինստիտուտների գործառույթների վերանայման ապահովումը և դրանց լիարժեք իրագործման համար լիազորությունների ամբողջացումը.

3) միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտ ներդնելը՝ տարանջատելով «հանրային ծառայող» և «հանրային պաշտոնյա» հասկացությունները.

4) ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավական և կառուցակարգային երաշխիքների ամրապնդումը.

5) հանրային ծառայությունն արհեստավարժ մասնագետներով համալրելը.

6) հանրային քաղաքականության պլանավորման և իրականացման կարողությունների զարգացումը, հանրային կառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման կարողությունների զարգացումն ու ռեսուրսներով ապահովումը.

45. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է **ռեսուրսների արդյունավետ կառավարման ապահովումը**: Այս նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1) բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության բարձրացումը.

2) ներքին աուդիտի համակարգի կատարելագործումը, այդ թվում՝ համապատասխան մասնագետների որակավորման բարձրացման միջոցով.

3) գնումների կազմակերպման և դրանց արդյունքների բողոքարկման ընթացակարգերի բարելավումը:

46. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման նպատակով կարևորվում է նաև **հանրային կառավարման համակարգի շարունակաբար արդիականացումը**: Այս նպատակով իրականացվելիք միջոցառումներն են՝

1) էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործումը.

2) կառավարման համակարգի արդիականացման միջազգային լավագույն փորձի շարունակական ուսումնասիրությունն ու կիրառումը:

47. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման նախադրյալներից է նաև **հանրային ծառայությունների որակի բարելավումը**: Սրա իրականացման միջոցառումներն ընդգրկելու են՝

1) ողջամիտ ժամկետներում ծառայությունների պատշաճ մատուցումը.

2) պետության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում էլեկտրոնային ծառայությունների մատուցման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը.

3) ծառայությունների որակի գնահատման օբյեկտիվ և կանխատեսելի չափորոշիչների սահմանումը.

4) պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդնումը.

5) ծառայությունների որակի շարունակական գնահատումը, ծառայությունների արդար և հասցեական բաշխման սկզբունքների ապահովումը,

շահառուներին հանրային ծառայությունների բարելավման գործընթացում ներգրավելը:

2.1.3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորումը

48. Կոռուպցիայի կանխարգելման համար կարևոր նախապայման է թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորումը: Դրան հասնելու ճանապարհին կարևորվում է **բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովումը:**

49. Բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովման միջոցառումներն ընդգրկելու են՝

1) տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի ու ժամկետների հստակեցումը, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը.

2) պետական մարմիններում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակումը և համապատասխան փաստաթղթերում վերջիններիս գործառույթների ամրագրումը.

3) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերլուծումը, անհրաժեշտության դեպքում դրանում լրացումների և փոփոխությունների կատարումը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին.

4) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակումը.

5) հանրությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման նոր գործիքներ ներդնելը:

50. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է նաև **բարձրացնել իշխանության մարմինների և հանրային ինստիտուտների գործունեության թափանցիկությունը**: Այս նպատակով իրականացվելիք միջոցառումներն ընդգրկելու են՝

1) պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցների մշակումը.

2) պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման՝ հանրության համար հասկանալի և վստահելի համակարգի գործարկումը.

3) պետական ծառայության թափուր պաշտոնների մեծ մասը մրցութային կարգով լրացնելն ապահովելը և թափուր պաշտոնների լրացման գործընթացը համակարգող և մոնիթորինգ իրականացնող իրավասու մարմին նշանակելը.

4) իրականացված աշխատանքների, գործունեության արդյունքների, այդ թվում՝ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների հրապարակումն ապահովելը.

5) քաղաքական որոշումներ ընդունողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանումը.

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող երևույթների ու խնդիրների վերաբերյալ հանրությանն ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն տրամադրող կառուցակարգերի մշակումը:

51. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է նաև **ֆինանսական թափանցիկության ավելացումը:**

52. Այս նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1) ՀՀ պետական բյուջեի մշտադիտարկման կառուցակարգերի կատարելագործումը.

2) անկախ աուդիտի համակարգի զարգացումը.

3) աուդիտորական եզրակացությունների հրապարակայնության մեծացումը:

2.1.4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը

53. Կոռուպցիայի դեմ պայքարի գործում էականորեն կարևորվում է քաղաքացիական հասարակության ներգրավումը հանրային կառավարման համակարգի գործունեության մեջ: Մասնակցային կառավարման համակարգի ձևավորման համար նախևառաջ կարևորվում է **կայուն կապի ձևավորման ապահովումը, շարունակական երկխոսությունը՝ քաղաքացիական հասարակության և իշխանության մարմինների ու հանրային ինստիտուտների միջև:** Սույն խնդրի իրականացման միջոցառումներն ընդգրկելու են՝

1) ընթացող բարեփոխումների ու ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության, գործարար հանրության, քաղաքացիների, ՀԼՄ իրազեկվածության մակարդակի բարձրացումը՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ միջոցառման իրականացման համար պատասխանատու մարմնի կողմից էլեկտրոնային կայքէջում հաշվետվություն հրապարակելու, շարունակական հանդիպումներ անցկացնելու միջոցով.

2) երկխոսության նոր և կայուն հարթակների ձևավորմանը նպաստելը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաների, ֆորմալ ցանցերի տեսքով.

3) հանրային լսումների և քննարկումների կազմակերպման ու անցկացման կանոնակարգված ձևաչափեր ներդնելը.

4) պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծումը:

54. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորման համար կարևոր դեր է խաղում **որոշումների ընդունման, իրականացման և վերահսկման գործընթացում հանրային մասնակցության ապահովումը**: Այս նպատակով իրականացվող միջոցառումներն ընդգրկելու են՝

1) էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքներ ներդնելը, այդ թվում՝ էլեկտրոնային սոցիոլոգիական հարցումների, էլեկտրոնային քվեարկությունների, նոր առաջարկությունների հավաքման և այլ մեթոդների կիրառմամբ.

2) պարբերական հանդիպումների արդյունքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանրային ինստիտուտների առանձին լիազորություններ պատվիրակելու կամ դրանց համատեղ իրականացման հնարավորություն տալու հարցի քննարկումը.

3) պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելը՝ յուրաքանչյուր բնագավառում մշտադիտարկման կայուն և անկախ ենթահամակարգերի ձևավորման, մշտադիտարկման գործընթացում շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման, մշտադիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատվության և խրախուսանքի կառուցակարգերի գործարկման միջոցով.

4) որոշումների ընդունման, իրականացման և վերահսկման գործընթացում քաղաքացիական հասարակության լիարժեք և արդյունավետ մասնակցություն ապահովող անհրաժեշտ և վերաբերելի կարողությունների զարգացմանն աջակցելը:

2.2. Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը և արդյունավետ քննությունը

55. Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներից մեկը կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումն է և նման վարքագծի դրսևորումների արդյունավետ քննումը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՔՕ-ն սահմանում է մեկ տասնյակից ավելի կոռուպցիոն հանցագործություններ, սակայն դա լիարժեք չի արտացոլում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ծավալը և բովանդակությունը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն բնույթի

իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության համակարգ չի գործում: Չկան պաշտոնատար անձանց կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու գործուն կառուցակարգեր, ճշգրիտ որոշված չէ կոռուպցիոն հանցանքների շրջանակը, իսկ այդ հանցանքների քննությունն իրականացնող մարմինների անկախության, մասնագիտացվածության և փոխգործակցության պահանջները միշտ չէ, որ պահպանվում են:

56. Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում **կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործուն համակարգ ներդնելու, ինչպես նաև շարունակաբար կատարելագործելու կոռուպցիոն դրսևորումների համար կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցները:** Սրա իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) մատչելի և կանխատեսելի ձևակերպել կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող դրույթները.

2) իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարությանը վերաբերող վերլուծություն.

3) խստացնել կոռուպցիոն հանցանքների համար սահմանված պատիժները, երկարաձգել դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները.

4) կատարելագործել կոռուպցիոն վարքագծի հետևանքով պատճառված վնասի հատուցման մեխանիզմները:

57. Հակակոռուպցիոն ռազմավարության կարևորագույն քայլերից է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների արդյունավետ քննության իրականացումը, ինչը դեռևս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: ՀՀ-ում կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերով նախաքննությունն իրականացնում են տարբեր քննչական մարմիններ, ինչն ինքնին դրական ազդեցություն չի ունենում քննչական գործունեության արդյունավետության վրա: Անհրաժեշտություն է առաջանում **գործարկելու կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգեր:**

58. Նման կառուցակարգերի գործարկման միջոցառումներն են՝

1) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահել լիազորություն՝ վարքագծի կանոնագրքերի պահանջների, այդ թվում՝ շահերի բախման կանոնների, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու վերաբերյալ

առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմիններ կամ ինքնուրույն կիրառել պատասխանատվության միջոցներ.

2) մշակել կոռուպցիոն հանցանքների շրջանակը որոշելու պատշաճ մեթոդաբանություն և օրենքով սահմանել դրանց սպառիչ ցանկը.

3) հստակ տարանջատել կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը՝ հաշվի առնելով ինչպես այդ հանցանքների բնույթը, այնպես էլ՝ դրանց կատարման մեջ մեղադրվող անձանց առանձնահատկությունները.

4) ապահովել, որպեսզի կոռուպցիոն հանցանքները քննեն նախաքննական մարմինների մասնագիտացված ստորաբաժանումները, իսկ այդ գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը և հետագայում մեղադրանքի պաշտպանությունն իրականացնեն բացառապես այդ գործերով մասնագիտացած դատախազները.

5) կոռուպցիոն բնույթի իրավախախտումները բացահայտելիս, ինչպես նաև դրանց կապակցությամբ քրեական վարույթ իրականացնելիս՝ ուժեղացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն, նախաքննություն և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների միջև համագործակցությունը.

6) մշակել կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկա, այն է՝ որոշակի սկզբունքների և չափորոշիչների ամբողջություն, որը հնարավորություն կտա իրավակիրառողին համակողմանիորեն բացահայտելու կոռուպցիոն հանցագործության բոլոր փաստական հանգամանքները՝ անկախ դրա տեսակից, բնույթից և այն կատարած անձից:

2.3. Հանրային վստահության բարձրացումը

59. Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր բաղադրատարրերից է քաղաքացիական հասարակության ներակայացուցիչների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարին: Այս առումով կարևորվում է հակակոռուպցիոն պայքարի միջոցների և կառուցակարգերի մասին հասարակության պատշաճ իրազեկումը: Վերջինիս հետ սերտորեն կապված է նաև հանրային ծառայողների, պատասխանատուների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթությունը: Այդուհանդերձ, այս բնագավառում մինչ օրս պետական մակարդակով էական քայլեր չեն ձեռնարկվել, հասարակությունը լիարժեք չի ընդգրկվել կոռուպցիայի դեմ մղվող պայքարում և օբյեկտիվորեն զրկված է եղել այդ գործընթացի վրա ներազդելու հնարավորությունից:

60. Բացի դրանից, առայժմ բավականաչափ ակտիվ չէ իրավապահ մարմինների և հանրության համագործակցությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների հանդեպ հանրային վստահության ցածր մակարդակով: Հանրությունն իրավապահ մարմիններին կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար և ամբողջական տեղեկատվություն չի տրամադրում: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան անհրաժեշտ պայմաններ՝ ազդարարման համար: Առկա չեն այս գործունեությունը կարգավորող բավարար և համապարփակ օրենսդրական կարգավորումներ: Բացի դրանից, ձևավորված չէ հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարին մղող դրական միջավայր: Թույլ է նաև պետության կողմից հանրության մեջ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների նկատմամբ անհանդուրժողականության վերաբերյալ քարոզչական աշխատանքների իրականացումը:

61. Վերոշարադրյալ հիմնահարցերը լուծելու համար կարևորվում է համալիր և հետևողական մի շարք քայլերի ձեռնարկումը: Այսպիսով, **կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ գործուն միջոցները՝**

1) օրենքով սահմանել, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձինք հավասարապես օգտվում են տուժողների, վկաների և փորձագետների համար քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ պաշտպանության միջոցներից.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն նախատեսել հանցագործության վերաբերյալ հաղորդում տալու համար հանցագործության վերաբերյալ հաղորդում տվող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց գույքին կամ առողջությանը վնաս պատճառելու կամ այդպիսի սպառնալիքի համար, ինչպես նաև հանցագործության վերաբերյալ հաղորդում տվող անձի՝ իրավապահ մարմնի ներկայացուցչի կողմից ոչ իրավաչափ գաղտնազերծման համար.

3) սահմանել, որ իրավապահ մարմինների հետ համագործակցության դեպքում կոռուպցիոն հանցանքներին առնչակից անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից կամ ակնկալել համեմատաբար մեղմ պատժվելու հնարավորություն.

4) հանրությանը պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ հրապարակել ամփոփ տեղեկատվություն ձևավորված կարգապահական, վարչական և դատական պրակտիկայի մասին.

5) հանրությանը պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն պետական ծառայողների պաշտոնանկության կամ տույժերի վերաբերյալ և հանրայնացնել

հիմնավորումները՝ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության և այլ երաշխիքների տրամադրման նկատառումները.

6) յուրաքանչյուր հանրային հաստատությունում ստեղծել մեխանիզմներ կոռուպցիոն իրավախախտումների առկայության դեպքում համապատասխան մարմիններին զեկուցելու վերաբերյալ և իրականացնել քարոզարշավ՝ հանրային ծառայողների շրջանում նման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար.

7) կատարելագործել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վիճակագրության վարման և հաշվետվություններ ներկայացնելու համակարգերը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

3.1. Հակակոռուպցիոն ռազմավարությունը կրթության ոլորտում

62. Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է՝ որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի, այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: ՀՀ կառավարությունը, որպես կրթության ոլորտի առաջնային խնդիրներ, դիտարկում է կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, մատչելի և հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար:

63. 2009-2012 թթ. ընթացքում հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում մշակվել են «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին» տեղեկանքի ու բնութագրիչների ձևերը և հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը: Լրամշակվել են ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթական հաջորդ աստիճանի փոխադրման, դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու, հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգերը: Ներդրվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների միասնական համակարգը: Ներկայումս գործում են հանրակրթության ոլորտում

կադրերի նշանակման գործընթացը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր: 2012թ. հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդները ընդունելության քննությունները հանձնել են կենտրոնացված եղանակով՝ պետական բուհերի դիմորդների հետ միասին: Փոփոխություններ են կատարվել «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում՝ ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի մրցակցային դաշտի և միասնական քաղաքականության ստեղծման նպատակով: Կանոնակարգվել է դասագրքերի գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորումը և բարելավվել դասագրքերի մրցույթի անցկացման գործընթացը՝ ապահովելով հրա-պարակայնությունը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի համաձայն բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել են այդ հաստատությունների տարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշները, ինչի արդյունքում ավելի քան նախկին 90 մասնավոր բուհերից այսօր գործում է 34-ը: Ընդլայնվել են կրթության պետական տեսչության գործառույթները: Բոլոր բուհերում ներդրվել և գործում են որակի ներքին ապահովման կենտրոններ, որոնք ներկայացնում են վերլուծական հաշվետվություններ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011-2012 թվականների տեսչավորումների, ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ԿԳՆ-ի պաշտոնական կայքում և կրթական պորտալում (www.edu.am, www.armedu.am), ինչպես նաև «Կրթություն» շաբաթաթերթում: Մշակվել է ՀՀ ԿԳՆ-ի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթը, որի բաղադրիչներից է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումը: 2012 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ-ի աշխատակազմից համանման սեմինար քննարկումներին և վերապատրաստումներին մասնակցել է ընդհանուր թվով 30 մասնագետ: Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական ու մանկավարժական խորհուրդների, մեթոդական միավորումների մասնակցությունն ապահովող դրույթները, ինչպես նաև աշակերտական խորհուրդների լիազորությունները: Հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության 2011-2015 թթ. ռազմավարությունը, որը նպատակաուղղված է նաև նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն

կարողությունների զարգացմանը: Խստացվել է դպրոցում սահմանված գործառնական ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողությունը: Սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ: Հանրային իրազեկման բարձրացման նպատակով լուսաբանվել է կրթության ոլորտում իրականացվող՝ հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը, նախարարության պաշտոնական կայքում գործող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջում զետեղվել է Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թթ. միջոցառումների համալիր ծրագիրը, այդ ծրագրի հետ կապված հաշվետվությունները հրապարակվել են տարբեր լրատվամիջոցներով: Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ներառվել են հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման մեջ: Մշակվել և ներդրվել են «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, ինչպես նաև «Հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույց» գրքույկը՝ բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար: Ուսանողները, օգտագործելով նշված գրքույկը, իրենց ուսումնական հաստատություններում կազմակերպում և իրականացնում են հակակոռուպցիոն երիտասարդական միջոցառումներ:

64. Ներկայումս կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի, իր հակումներին և ընդունակություններին համապատասխան, ստանա որակյալ կրթություն, և հանրապետության տնտեսությունն ապահովվի մրցունակ մասնագետներով: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից: Այս նպատակադրումներին հասնելու կարևոր նախապայմաններից մեկը կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատումն է:

65. Կրթության բոլոր մակարդակներում իրականացվող բարեփոխումները ենթադրում են կրթության ոլորտում քաղաքացիների ընդգրկվածության զգալի աճ, որի արդյունքում ավելի մեծ թվով քաղաքացիներ են առնչվելու կրթության ոլորտին: Ուստի, ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը կարող են վտանգել և՛ կրթության ոլորտում իականացվող բարեփոխումների հաջող ընթացքը, և՛ ունենալ ոչ ցանկալի հետևանքներ՝ կրթության նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման հարցում:

66. Կրթության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով ռազմավարության գործողության առաջին տարում

նախատեսվում է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա կսահմանվեն կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումները:

3.2. Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում

67. Կոռուպցիայի դեմ պայքարը հարկային վարչարարության շարունակական բարեփոխումների իրականացման կարևոր ուղղություններից է: Հարկային և մաքսային համակարգերում կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախորդ տարիներին էական քայլեր են իրականացվել: Մասնավորապես, հետևողականորեն իրագործվել են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրով սահմանված քայլերը, ինչի արդյունքում զգալի նվազեցվել է հարկային ծառայող-հարկ վճարող անմիջական շփումը, բարձրացվել են հարկային մարմնում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:

68. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքում էականորեն նվազել են հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները՝ գերազանցապես հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների մատուցման, հարկային հաշետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգի ամբողջական գործարկման, ռիսկերի վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգերի ներդրման միջոցով: Իրականացվել են շարունակական աշխատանքներ՝ հարկ վճարողներին իրազեկման բնույթի ծառայությունների մատուցման շրջանակի ընդլայնման, հարկերի վճարման և հաշվետվությունները ներկայացնելու մասին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության, հարկային օրենսդրության վերաբերյալ բացատրական աշխատանքների մակարդակի բարձրացման ուղղությամբ: Իրականացվել են շարունակական աշխատանքներ՝ մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորման հստակեցման, պարզեցված ընթացակարգեր ներդնելու, մաքսային արժեքների որոշման հստակ չափանիշներ սահմանելու ուղղությամբ: Ներդրվել են մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման ընթացակարգեր: Վերանայվել, հստակեցվել են համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, մշակվել են հարկային և մաքսային ծառայողների պաշտոնների նկարագրերը, որով հստակեցվել է հարկային ծառայողների աշխատանքային պարտականությունների շրջանակը, ներդրվել է հարկային և մաքսային ծառայողների պարտադիր վերապատրաստման սխեմա՝

հաստատված ծրագրին համապատասխան: Բարելավվել են գանգատարկման ընթացակարգերը, և բարձրացվել է հարկ վճարողների վստահությունը գանգատարկման համակարգի նկատմամբ: Հարկային և մաքսային համակարգերում արդյունավետ կերպով ներդրվել են ներքին հսկողության իրականացման ընթացակարգերը, սահմանվել են պարզեցված մաքսային ընթացակարգեր՝ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար: Ներդրվել է լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտը, վերջիններիս օրենսդրությամբ իրավունք է վերապահվել կիրառելու արտահանման, ներմուծման պարզեցված ընթացակարգեր, սահմանվել են լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրման չափանիշները:

69. Առաջիկայում հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման, ներքին հսկողական մեխանիզմների կատարելագործման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով ռազմավարության գործողության առաջին տարում նախատեսվում է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա կսահմանվեն պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումները:

3.3. Հակակոռուպցիոն ռազմավարությունը ոստիկանության ոլորտում՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով

70. Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային քաղաքականության իրականացման ուղղությամբ ոստիկանության համակարգում կատարվող շարունակական աշխատանքներն սկսում են կրել առավել համակարգված բնույթ: Մասնավորապես, ոստիկանության կողմից բազմակողմանի միջոցներ են ձեռնարկվում համակարգի բոլոր ոլորտներում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված իրավական, տնտեսական, կրթական, կազմակերպչական և այլ ծրագրերի հետևողական կիրառումն ապահովելու համար: Նշված նպատակներին հասնելու և դրանց արդյունավետությունն ապահովելու համար իրականացվող աշխատանքների հիմքում դրվում են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են նպատակների իրագործելիությունը, շարունակականությունը, հետևողականությունը, գործունեության հրապարակայնությունը և այլն:

71. 2009-2012 թթ. ընթացքում հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում սահամանվել են ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման ու միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր, ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհատրանսպորտային պատահարների

գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչային ծրագիր, կատարելագործվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը, կանոնակարգվել է բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը՝ հանրային ծառայություններ մատուցելիս: Բնակչության պետական ռեգիստրի բազայում ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշերի համակարգը, և քաղաքացուն հատկացվող ծառայությունների համարանիշը, օրենքով սահմանված անհատական տվյալների հիման վրա, գեներացվում է ավտոմատ եղանակով: Կատարելագործվել է ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը: Ստեղծվել է ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով: ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության նոր՝ www.police.am ինտերնետային կայքէջի «Օգնություն քաղաքացիներին» բաժնում քաղաքացիներն ունեն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալներին կայքից դիմումներ ուղարկելու հնարավորություն: Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու նպատակով պարզեցվել է վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու, տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրացման, հաշվառման, համարանիշերի և վկայագրերի հատկացման, ինչպես նաև վարորդական վկայականներ տալու, փոխանակելու ընթացակարգերը: Անձնագրային վիզաների վարչության մի շարք անձնագրային բաժանմունքներում տեղադրվել են անձնագրային ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային վճարային տերմինալներ, ինչի շնորհիվ զգալիորեն արագացել է քաղաքացիների սպասարկման գործընթացը: ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության մասնաշենքում գործարկվել է անլար ինտերնետ (WIFI) համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռել վարչություն այցելող քաղաքացիներին անվճար օգտվել ինտերնետից: Ներդրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և հատուկ կացության ռեգիստր՝ անհատական տվյալների էլեկտրոնային համակարգ: Ներդրվել է սեփականատիրոջ դիմումի հիման վրա բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին կարճ ժամանակում հաշվառումից հանելու պարզեցված ընթացակարգ: Բնակչության պետական ռեգիստրում անձանց հաշվառման և հաշվառումից հանելու գործընթացը պարզեցվել է, համաձայն որի անձնագրային ծառայությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրից բնակելի տարածության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձանց ցուցակը պարզում է էլեկտրոնային եղանակով: Անձնագրային բոլոր

ծառայություններում (բացառությամբ Դավթաշենի և Քանաքեռ-Զեյթունի) տեղադրվել են անձը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի համակարգեր, ինչը հնարավորություն է ընձեռել սպասարկելու մարզերի բնակիչներին ևս, այդ թվում՝ կենսաթոշակային բարեփոխումներով պայմանավորված: Ստեղծվել է արագ արձագանքման «Թեժ գիծ» ծառայությունը:

72. Կոռուպցիայի դեմ տարվող պայքարում շարունակվում է արդիական մնալ ինչպես քաղաքացիներին ծառայությունների մատուցման, այնպես էլ՝ գործունեության մյուս ոլորտներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդումը:

73. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում առկա բացերը և խնդիրները լուծելու, թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման ու կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով նախատեսվում է ռազմավարության գործողության առաջին տարում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա կսահմանվեն ոստիկանության ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումները:

3.4. Հակակոռուպցիոն ռազմավարությունն առողջապահության ոլորտում

74. Կոռուպցիայի դեմ պայքարն առողջապահության ոլորտի շարունակական բարեփոխումների իրականացման առանցքային ուղղություններից է:

75. Առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը հատկապես շոշափելի են առողջապահական համակարգի կառավարման, ֆինանսավորման, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման, դեղերի ու բժշկական նշանակության պարագաների շրջանառության ոլորտներում:

76. 2009-2012 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում առողջապահության ոլորտում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ավելացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայվել և փոփոխվել է հիվանդանոցային ծառայությունների փաթեթը, հիվանդանոցներում համավճարի սկզբունքի ներդրման համար հաստատվել են Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության բյուջետային ծրագրերը: Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը ներդրվել են միայն ծննդօգնության և երեխաներին (մինչև յոթ տարեկան) բժշկական օգնության

ծրագրերում: Առողջապահության համակարգում գնագոյացման համակարգի բարելավման և ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանների վերացման ռազմավարական դրույթների շրջանակում համավճարի սկզբունքը ներդրվել է նաև «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում: Հաստատվել են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմա-կերպությունների կողմից վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների նվազագույն և առավելագույն կողմնորոշիչ գների սանդղակը՝ դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի, և բժշկական ծառայությունների ինքնարժեքի ծախսային հոդվածների կողմնորոշիչ նորմատիվները: Այդ նորմատիվներով աշխատում են միայն պետպատվերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժկազմակերպությունները: Պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայվել և հստակեցվել է: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության ռազմավարական դրույթի շրջանակում 2012 թվականին ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցներ և չափորոշիչներ: Հիգիենիկ և համաճարակային ծառայության գործունեության թափանցիկության, հաշվետվողականության ավելացման ռազմավարական դրույթի շրջանակներում հաստատվել և ներդրվել են մանրէաբանական, սանիտարաքիմիական, մակաբուծաբանական լաբորատորիաների և ֆիզիկական գործոնների մակարդակների չափման ժամանակ կիրառվող (թվով 39) հաշվառման ձևաթղթերը, ինչպես նաև՝ իմունականխարգելման ոլորտի վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը:

77. Առողջապահության ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով ռազմավարության գործողության առաջին տարում նախատեսվում է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա կսահմանվեն առողջապահության ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումները:

3.5. Ոլորտների ռիսկային վերլուծությունը և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի վերանայումը

78. Հաշվի առնելով նախորդ ռազմավարության իրագործման հետ կապված խնդիրները և միջազգային փորձաքննության արդյունքները՝ ակնհայտ է դառնում, որ սույն հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է անկախ փորձագետների կողմից ոլորտային ռիսկերի գնահատման իրականացումը: Խորհուրդը, առնվազն տարեկան մեկ անգամ, ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա, քննարկում է միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունավետությանը, լրացուցիչ միջոցառումների ընդգրկման կամ գործող միջոցառումների փոփոխման նպատակահարմարության հարցը՝ ներառելով հրատապ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են գերակա ոլորտներում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար:

79. Նշված գործելակերպն ուղղված է ուրվագծելու գործողությունների լավագույն ուղղությունները՝ պատրաստի լուծումներ առաջարկելու փոխարեն:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

80. Քանի որ հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրը չեն բացառում կոռուպցիոն ռսիկերը, հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և ոլորտային ծրագրերի իրականացումն ապահովվելու է մոնիթորինգի ու գնահատման համակարգի ներդրմամբ:

81. ՀՀ կառավարությունը կարևորում է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հրապարակային, թափանցիկ, նորարար և հասարակության ակտիվ մասնակցության վրա հիմնված մոնիթորինգի ու գնահատման համակարգի ներդրումը: Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի ու գնահատման համակարգն ուղղված է լինելու հանրային կառավարման համակարգում թափանցիկության և հաշվետվողականության ավելացմանը, ինչին հնարավոր է հասնել հակակոռուպցիոն ներկա ռազմավարությամբ առաջարկվող բարեփոխումների միջոցով և կոռուպցիայից զերծ հանրային կառավարում ունենալուն միտված, գիտելիքներով ու կարողություններով զինված քաղաքացիական հասարակության դերակատարների պահանջատիրությամբ ու հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը մասնակցությամբ:

82. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի ու գնահատման պատշաճ համակարգը հնարավորություն կտա գնահատելու, թե որքանով են համալիր, թիրախային և ամբողջական պլանավորված հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով նախատեսված միջոցառումները: Գնահատումը թույլ

կտա բացահայտել հակակոռուպցիոն ռազմավարության մեջ տեղ գտած թերի կամ խնդրահարույց լուծումները, դրանց հիման վրա նախանշել նոր խնդիրներ և ձևակերպել այդ խնդիրների լուծման ուղիները:

83. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգն իրականացվելու է խորհրդին կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված՝ մշտապես գործող փորձագիտական հանձնախմբի կողմից, որի աշխատանքներին մասնակցելու են հասարակության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

84. Այս հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի նորարարությունն ու առանձնահատկությունն այն է, որ ռազմավարության իրականացման մոնիթորինգի աշխատանքներում էականորեն ավելացվելու է հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը: Մասնակցային մոնիթորինգի իրականացման նորարար մոտեցումները դառնալու են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների էական մաս և պարբերաբար վերանայվելու են՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը հանրային մասնակցության արդյունավետության բարձրացման ու հանրության արձագանքների վերաբերյալ հաղորդումների ստացման նոր մոտեցումներ ներառելու նպատակներով:

85. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրման գործում, քաղաքացիական հասարակության ներգրավումից բացի, կարևորվելու են ինստիտուցիոնալ կառույցի, մոնիթորինգի և գնահատման մեթոդների ու ցուցիչների համակարգի ձևավորումը, տեղեկատվական հոսքերի կազմակերպումն ու բազաների ստեղծումը, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման կարողությունների շարունակական զարգացումը:

86. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի մոտեցումներն ու նպատակներն են լինելու՝

1) հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը.

2) հակակոռուպցիոն ռազմավարության պարբերական մոնիթորինգն ու գնահատումը՝ գործնական խնդիրները բացահայտելու նպատակով.

3) հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացի (առաջընթացի) ուսումնասիրությունը.

4) հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացքում բացահայտված գործնական խնդիրների լուծումը.

5) մասնավոր և հանրային հատվածում հակակոռուպցիոն իրազեկության մակարդակի բարձրացումը:

87. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքները պետք է հրապարակվեն կիսամյակային և տարեկան մակարդակներով՝

մոնիթորինգային հաշվետվություններ կազմելու միջոցով: 2009-2012 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության վերջնական արդյունքը կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատումն էր, որը չափվում էր Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ) և Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ) ցուցանիշերի թիրախների ու ընթացիկ վիճակի միջև նախանշված խզման կրճատմամբ: ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը ևս կօգտագործի այս ցուցանիշերը: Վերջնական արդյունքը պայմանավորված կլինի մի շարք միջանկյալ արդյունքներով, որոնց մոնիթորինգն ու գնահատումը կսահմանվեն ըստ կառավարման արդյունավետության ագրեգացված ցուցանիշերի՝ կարգավորման որակ, կառավարման արդյունավետություն, իրավունքի գերակայություն, ձայնի լսելիություն և հաշվետվողականություն, քաղաքական կայունություն, քաղաքացիական ազատություններ:

88. Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքները՝ գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատումը, պայմանավորված կլինեն թիրախային ոլորտներում և համակարգերում արդյունավետության, թափանցիկության ու հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներով: Դրանց իրականացման և արդյունքների մոնիթորինգի ու գնահատման համար կկիրառվեն համապատասխան գործոնային ցուցիչներ:

89. Մոնիթորինգի և գնահատման մեթոդների ու ցուցիչների համակարգը կներառի հանրային վստահության, կառավարման արդյունավետության, թափանցիկության և հրապարակային գործունեության մակարդակների, մատուցվող հանրային ծառայության որակի գնահատումը: Ծրագրի միջոցառումների և գործողությունների իրականացման մոնիթորինգի համար կմշակվեն դրանց կատարումը փաստող կոնկրետ ցուցանիշեր, որոնց արդյունքների հիման վրա կկազմակերպվի ազդեցության գնահատման գործընթացը: Հասարակության և թիրախային խմբերի կողմից հակակոռուպցիոն ռազմավարության ազդեցության գնահատումն իրականացվելու է հարցումների, հետազոտությունների և հանրային քննարկումների միջոցով:

90. Արդյունքների գնահատման համար կկազմակերպվեն տեղեկատվական հոսքեր, և կստեղծվեն տվյալների բազաներ: Սա պահանջելու է ռազմավարության ու ոլորտային ծրագրերի արդյունքների գնահատման վիճակագրական ցուցանիշերի, միջազգային կառույցների կողմից թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակի որոշման ու կոռուպցիային վերաբերող առանձին համաթվերի և ցուցիչների տվյալների հավաքագրում, թեմատիկ ու նպատակային հարցումների և ուսումնասիրությունների արդյունքում տվյալների բազաների ստեղծում:

91. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորիգի ցուցանիշների համակարգում ընդգրկված ցուցանիշներին կներկայացվեն մի շարք պահանջներ՝

դրանք պետք է հստակ սահմանելի լինեն, բացառեն երկակի մեկնաբանման հնարավորությունները, ցուցանիշները լինեն քանակապես չափելի, բնութագրեն հակակոռուպցիոն ռազմավարության քաղաքականությունների, ըստ բնագավառի՝ գործողությունների, և ըստ ոլորտի՝ միջոցառումների, միմյանց վրա ազդեցության մակարդակները:

92. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի ցուցանիշների համակարգը, ընդհանուր զարգացումներից բացի, պետք է ապահովի նաև ծրագրի տեսանկյունից կարևոր մասնավոր զարգացումների ու միտումների գնահատականը:

93. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի ակնկալվող արդյունքներն են լինելու՝ հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի ընդհանուր իրավիճակի և ռիսկերի բացահայտումը, կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքի ավելացումը կոռուպցիայի հակված հանրային կառավարման որոշակի թիրախային ոլորտներում, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտները մոնիթորինգի ենթարկելու, թափանցիկություն և հաշվետվողականություն պահանջելու՝ քաղաքացիական հասարակության դերակատարների կարողության ավելացումը:

94. Հակակոռուպցիոն ռազմավարության պարբերական գնահատման արդյունքում փորձագետները կկազմեն գնահատման վերաբերյալ հաշվետվություններ և առաջարկություններ: Թիրախային ոլորտներում մոնիթորինգի արդյունքում գնահատման ցուցանիշները կունենան որոշակի առանձնահատկություններ: Մոնիթորինգի արդյունքում կկազմվեն տարեկան հաշվետվություններ:

95. Տարեկան հաշվետվությունը կներառի հայեցակարգի իրականացման գնահատականները, հայտնաբերված թերությունները և առաջարկությունները՝ դրանք լուծելու համար: Քանի որ կարևորվելու են մոնիթորինգի ու դրա արդյունքների հաշվետվողականությունը և հրապարակայնությունը, ապա հանձնախումբը կձևավորի ինտեգրացված պորտալ, որտեղ կտեղակայվեն հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ հաշվետվությունները՝ հասանելի դարձնելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1141 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏ						
1. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն	Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրված են	Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա պետական եկամուտների հավաքագրման ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում			Անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ ՀՀ ֆինանսների նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍՈՎ						
2. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով՝ ոստիկանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն	Ոստիկանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրված են	Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով՝ ոստիկանության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում			Անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ

Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ						

3. Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն	Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրված են	Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա կրթության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում			Անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ						
4. Առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն	Առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրված են	Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա առողջապահության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում			Անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ ՀՀ առողջապահության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
5.Հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում		4 ոլորտային ծրագրերի ընդունումից հետո կատարվել են այլ ոլորտների վերաբերյալ ուսումնասիրություններ, անհրաժեշտության դեպքում ներկայացվել են առաջարկություններ հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ			ՀՀ արդարադատության նախարարություն Առանձին ոլորտներում հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող այլ պատասխանատու մարմիններ	Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ՕՐԻՆԱՎՈՐ ԵՎ ԲԱՐԵԽԻՂՃ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴԱՍԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ						
6. ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում, ճյուղային օրենսդրական	Միջազգային փորձն ուսումնասիրված է	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ, անհրաժեշտության դեպքում օրենսդրական	Ըստ անհրաժեշտության՝ ճյուղային օրենսդրությամբ կատարվել են համապատասխան փոփոխություններ		ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ) ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ պետական	Ֆինանսավորում չի պահանջվում:

պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը					պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)	
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ						
18.Հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Մշակվել և հաստատվել է հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագիրը:		Կատարված է վարչարարության պարզեցման ծրագրի միջոցառումների 50%-ը	Կատարված է վարչարարության պարզեցման ծրագրի միջոցառումների 100 %-ը	ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
19. Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագիրը մշակվել է:		Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայությունները էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագիրը ներդրվել է		ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ պետական բյուջե և այլ աղբյուրներ
20.Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում		Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրություններն իրականացված են	Ներկայացված են առաջարկություններ պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ		ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
21. Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդնում		Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդրման ծրագիրը մշակված է	Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդրման ծրագիրը մշակված և հաստատված է	Փորձարարական ծրագրերն իրականացված են	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ պետական բյուջե և այլ աղբյուրներ
22. Պետական մարմինների կողմից լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրման խթանում՝ դիտարկելով էլեկտրոնային	Պետական մարմիններում իրականացվել են ուսումնասիրություններ: Պետական մարմիններում իրականացվել է տեխնիկական պայմանների ապահովումը: Օրենսդրության մեջ կատարվել են		Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պետական մարմիններում լիցենզիաների		ՀՀ կառավարության աշխատակազմ ՀՀ պետական մարմիններ	ՀՀ պետական բյուջե և այլ աղբյուրներ

- կսահմանեն կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար:						
44.Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում	1. Անցկացվում են տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ 2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստեղծվել են իրավական հիմքեր 3. Իրականացվում է գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցում		Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակն ստեղծված է	Գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են ստեղծված հարթակում	ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ պետական բյուջե և այլ աղբյուրներ
45.Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծում,թարմացում, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցում և ավագանու նիստերի առցանց հեռարձակում	Իրականացվել է տեխնիկասարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթաց:	20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերն ստեղծված են՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ: Համայնքների համապատասխան աշխատողների համար կազմակերպվել են դասընթացներ	Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերը գործարկվում են, համայնքների ավագանու նիստերը և ՏԻՄ-ի ասուլիսներն առցանց հեռարձակվում են:		ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ մարզպետարաններ ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե և այլ աղբյուրներ
Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը				Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ